# Դաս 27. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և սուրբ Մեսրոպ Մաշտոց

Լրացուցիչ նյութ

## Հայ և օտարազգի հայտնիները Մեսրոպ Մաշտոցի մասին

*«Միրքով՝ սպեղծող, խոսքով՝ պայծառ, գործով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող, և որ նրա (Մեսրոպ Մաշտոցի) վարքի մեջ ամբարտավանությունը և մարդահաճությունը երբեք չկարողացան տեղ գտնել»:*

**Մովսես Խորենացի**



Մեսրոպ Մաշտոց, նկարիչ՝ Ֆրանչեսկո Մեցիոտո

*«Մեսրոպ Մաշտոցի գյուտը, անտարակույս, այն հզոր զենքն էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը 5-րդ դարի մեծ պայքարում և մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ՝ զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ հարուստ գրականությունը»:*

**Հակոբ Մանանդյան (պատմաբան)**

*«Եթե նկատի առնենք պատմական այն բացառիկ, ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատենք Պիպինոսի ու նրա զինակից Զիգֆրիդի գործունեության հետ, որ նրանք արին գերմանական ժողովրդի համար՝ այս վերջինները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի համեմատությամբ»:*

**Մարկվարտ (գերմանացի գիտնական, հայագետ)**

*«...Մաշտոցի հրաշալի ստեղծագործության՝ հայկական այբուբենի կատարելությունը աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել... » :*

**Էդմոնդ Շուց (հունգարացի բանասեր, դոկտոր)**